ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 26/53 -Լ «07» 02 2024 թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍՈՎՈՐՈՂԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏԻ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետով.

հրամայում եմ

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի սովորողին էլեկտրոնային փոստի հասցե տրամադրելու և օգտագործելու կանոնները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանի և կանոնների մասին ծանուցել ԵՊՀ սովորողներին:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ՝ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված
ԵՊՀ ռեկտորի 07.02.2024 թ. թիվ 26/53.2 հրամանի

ԿԱՆՈՆՆԵՐ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍՈՎՈՐՈՂԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏԻ ՀԱՍՑԵԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) սովորողին համալսարանական էլեկտրոնային փոստի հասցե (այսուհետ՝ հասցե) տրամադրվում է սովորողների էլեկտրոնային փոստի դոմեյնի (edu.ysu.am) տիրույթում (ձևաչափ՝ anun.azganunxx@edu.ysu.am):

Հասցեն տրամադրվում է ԵՊՀ-ում սովորողի ուսումնառության ողջ ժամանակահատվածի ընթացքում և կասեցվում է (այնուհետև ջնջվում) ուսումնառությունն ավարտելուց հետո:

2. Սույն կանոնների խախտման դեպքում սովորողի հասցեն կարող է կասեցվել:

2. ՀԱՍՑԵԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

3. Հասցեի մուտքային տվյալները և ժամանակավոր գաղտնաբառն ուղարկվում են սովորողի՝ նախօրոք տրամադրած անձնական էլեկտրոնային փոստին:

Հասցեն (օգտագործողի անվանումը, որը նախորդում է «@edu.ysu.am» հատվածին) գեներացվում է սովորողի անվան և ազգանվան ուղղակի լատինատառ տառադարձմամբ, իսկ համընկնման դեպքում ավելացվում է պայմանական թիվ:

Սովորողը պարտավոր է փոխել գաղտնաբառը (ընտրել այնպիսի գաղտնաբառ, որը բաղկացած կլինի առնվազն 8 նիշից և կպարունակի թվեր, սիմվոլներ և լատիներեն տառեր): Պետք չէ ընտրել օգտագործողի անվան հետ համընկնող կամ պարզ համադրումներից բաղկացած գաղտնաբառ: Անվտանգության նկատառումներից ելնելով անհրաժեշտ է ակտիվացնել նաև երկգործոն նույնականացումը:

Արգելվում է գաղտնաբառի փոխանցումն այլ անձի:

3. Համակարգում տեխնիկական խնդիրներ առաջանալու դեպքում անհրաժեշտ է այլ էլ. փոստից նամակ գրել admin@ysu.am հասցեին կամ մոտենալ ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչություն:

3. ՀԱՍՑԵԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

5. էլ. փոստի հասցեն ԵՊՀ-ի և սովորողի միջև հաղորդակցության, ինչպես նաև պաշտոնական ծանուցման կապուղի է. ԵՊՀ ստորաբաժանումների կողմից սովորողի էլ. փոստի հասցեին հաղորդագրությունների առաքումը հանդիսանում է պաշտոնական ծանուցում:

6. Սովորողը իր էլ. փոստի հասցեն կարող է օգտագործել ԵՊՀ տեղեկատվական այլ համակարգեր մուտք գործելիս՝ նույնականացման նպատակով:

7. Սովորողը պարտավոր է իրեն տրամադրված էլ. փոստի հասցեն օգտագործել բացառապես կրթական նպատակներով և խուսափել ժամանցային կայքերում դրա օգտագործումից:

8. Հասցեի փոստարկղի ընդհանուր ծավալը 5 GB է: Ուղարկվող և ստացվող նամակներին կցված ֆայլերի ծավալների թողունակությունը կարգավորվում են տվյալ պահին գործածվող համակարգի կարգավորումներով: Բջջային հեռախոսներով հասցեն էլ. փոստի օգտագործման ծրագրային հավելվածում կարգավորելու պարագայում ուսանողներին խորհուրդ է տրվում այդ սարքի բովանդակության պահուստային պատճենումը ԵՊՀ էլ. փոստի պահոցում պահելու գործառույթը չմիացնել, որպեսզի համալսարանական էլ. փոստի սահմանված ծավալը գերազանցելու հետևանքով չարգելափակվի նոր նամակներ ստանալու կամ ուղարկելու հնարավորությունը:

4. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏԱԾ ՍՈՎՈՐՈՂԻ ՀԱՍՑԵԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՎ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ ՀԱՍՑԵԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

9. ԵՊՀ-ում ուսումնառությունն ավարտելուց հետո շրջանավարտին տրամադրվում է ԵՊՀ շրջանավարտի էլեկտրոնային փոստի դոմեյնի (@alumni.ysu.am) տիրույթում գրանցվող հասցե (ձևաչափ՝ ուսանողական էլ. փոստի անվանում @alumni.ysu.am),

10. Ուսումնառության ավարտից հետո ուսանողի հասցեն հասանելի է մեկ ամիս ժամկետով, որի միջոցով շրջանավարտին ուղարկվում է @alumni.ysu.am տիրույթում իր էլեկտրոնային փոստի նոր հասցեի մուտքային տվյալները: Ուսանողական փոստում առկա տեղեկատվության տեղափոխում չի կատարվում:

Համապատասխան ծանուցում ստանալուց հետո ուսանողական էլեկտրոնային փոստի հասցեն կասեցվում է և ջնջվում: